04.08.2021
347-87

Երևանի քաղաքապետ
Հայկ Մարությանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մարության,

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

Երևան քաղաքի Սիլիկյան հին խճուղի 60/1 հասցեի բնակելի թաղամասի անմիջական հարևանությամբ գործում է քարի արտադրամաս, որը անօրինական գործում է համայնքային սեփականություն հանդիսացող հողի վրա:

1. Տեղյա՞կ է արդյոք Երևանի քաղաքապետարանը այս արտադրամասի անօրինական գործունեության մասին:
2. Ի՞նչ քայլեր է ձեռնարկել/ձեռնարկում քաղաքապետարանը արտադրամասի անօրինական գործունեությունը անհապաղ դադարեցնելու նպատակով:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Ուշադրություն: Խնդրում ենք հարցմանը պատասխանել բացառապես ***էլեկտրոնային եղանակով:***

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան

Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ, Հեռ +37491407836, Էլ. հասցե՝ foi@foi.am Կայք՝ www.foi.am